ARMATS
ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
АРМАЭРОНАВИГАЦИЯ
закрытое акционерное общество
ARMATS
Closed Joint-Stock Company
Երևան 0042, Ի.Գասպարյան 33 / Ереван 0042, И.Гаспарян 33 / Yerevan 0042, I.Gasparyan 33, Tell: +374 10 292929 (366), e-mail: staff@armats.am

№ 8.1-195

«25» 03 2026

«Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ
Տնօրեն՝ Գ.Ղուկասյանին

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար «Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/25(2)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից՝ «Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ միջև 29.07.2025թ. կնքվել է թիվ 2.87 գնման պայմանագիրը:

Վերոհիշյալ պայմանագրով սահմանված՝ պայմանագրի կատարման վերջնաժամկետն էր՝ 26.11.2025թ.: 20.03.2026թ.-ին «Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ տնօրենը գրությամբ դիմել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենին՝ հայտնելով, որ որոշակի խոչընդոտների առաջացման պատճառով, ցանկանում է չեղյալ համարել 29.07.2025թ.-ին կնքված թիվ 2.87 պայմանագիրը: 24.03.2026թ.-ի դրությամբ, կարող ենք փաստել, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունները «Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ չի կատարել, և պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցված չեն:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով գնման պատասխանատու ստորաբաժանման առ 23.03.2026թ.-ի նիստի թիվ 1 որոշումը, «Դաբլ Քոքոնաթ

Դիջիթալ» ՍՊԸ № Մտից-147 առ 20.03.2026թ. գրությունը և այն, որ «Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի «բ» դրույթի՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ միակողմանի լուծում է 29.07.2025թ.-ին կնքված թիվ 2.87 Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ «Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Ուստի առաջարկում ենք Ձեզ, մինչև պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին վճարել «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/25(2)» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված՝

1. պայմանագրի ապահովման գումարը՝ **660 000 (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:**
2. որակավորան ապահովման գումարը՝ **990 000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:**

3. 29.07.2025թ.-ին կնքված թիվ 2.87 պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժը՝ **250 709 (երկու հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինը) ՀՀ դրամ:**

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Դաբլ Քոքոնաթ Դիջիթալ» ՍՊԸ կողմից մինչև պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պայմանագրի և որակավորման ապահովումները «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ հաշվեհամարին չփոխանցելու դեպքում՝ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ գանձելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/25(2)» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի և որակավորման ապահովումները, ինչպես նաև 29.07.2025թ.-ին կնքված թիվ 2.87 պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժը Ձեր կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվեն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Գլխավոր տնօրեն

Վ. Չիլինգարյան